ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ ՄԱՆՎԵԼԻ

ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ГРИГОРЯН АРМАН МАНВЕЛОВИЧ

КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО НА ВОЗМЕЩЕНИЕ ВРЕДА: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ И ЕВРОПЕЙСКИЕ ПРАВОВЫЕ СТАНДАРТЫ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - «Публичное право-конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Հ. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս.Վ. Նարուտտո**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Վ. Ռ. Պողոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի 19-ին ժ. 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հ. Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թ. հունիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար Ջ.Հ.Հայրապետյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու

Тема диссертации была утвервждена в Европейском университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А. А. Хачатрян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **С.В. Нарутто**

кандидат юридических наук, **В.Р. Погосян**

Ведущая организация**:** **Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 19-ого июля 2021 г. 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 8-ого июня 2021 г.

Ученый секретарь специализированного совета Дж. А. Айрапетян
кандидат юридических наук

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է իրավական, ժողովրդավարական պետություն, որտեղ մարդը բարձրագույն արժեք է, իսկ հանրային իշխանության պարտականությունն է հարգել և պաշտպանել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնցով այն սահմանափակված է որպես անմիջականորեն գործող իրավունք (Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածներ):

Դա նշանակում է, որ հանրային իշխանությունը կաշկանդված է մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով, իսկ իր գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը հանդիսանում է այդ իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և դրանց փաստացի իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Ի հակադրումն ասվածին՝ հաճախ են դեպքերը, երբ հանրային իշխանությունն ինքը խախտում է դրանք: Այդ պարագայում արդեն առաջ է գալիս խախտված իրավունքները վերականգնելու հրամայականը, ինչը կրկին պետք է դիտարկել որպես մարդու իրավունքները պաշտպանելու հանրային իշխանության պարտականության մաս:

Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտման փաստն արձանագրված լինելու դեպքում դրա վերականգնումը (պաշտպանությունը), մեծ հաշվով, իրականացվում է մինչև խախտումը եղած դրությունը նույնությամբ վերականագնելու կամ անձին խախտման հետևանքներին համարժեք հատուցում տրամադրելու միջոցով:

Ասվածից կարող ենք եզրակացնել, որ պատճառված վնասը հատուցելու միջոցով իր իսկ կողմից խախտված իրավունքը վերականգնելը հանդիսանում է մարդու իրավունքները և ազատությունները պաշտպանելու հանրային իշխանության սահմանադրական պարտականության իրացման դրսևորում:

Չնայած նրան, որ վնասի հատուցման իրավունքը՝ որպես հիմնական իրավունք, Սահմանադրությամբ իր ուղղակի ամրագրումը ստացել է միայն 2015 թ. տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ այն արտացոլված է եղել մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից ավելի վաղ շրջանում վավերացված միջազգային պայմանագրերում:

Այսպես, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (16 դեկտեմբերի 1966 թվական) 3-րդ հոդվածի 3-րդ մասի ա ենթակետում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (5 նոյեմբերի 1950 թ.) 13-րդ հոդվածում ամրագրված է, որ հիշյալ միջազգային պայմանագրերով ճանաչված իրավունքների խախտման պարագայում պետությունները պարտավոր են անձին տրամադրել պաշտպանության արդյունավետ միջոցներ: Այդպիսի պաշտպանության միջոցներից մեկն էլ հանդիսանում է իրավախախտման հետևանքով ի հայտ եկած վնասների հատուցումը:

ՀՀ սահմանադրական դատարանը 05.11.2013 թ. կայացրած իր թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ ճանաչելով բարոյական վնասի հատուցման ինստիտուտի բացակայությունը հակասահմանադրական՝ մասնավորապես արձանագրեց, որ «*բարոյական վնասի նյութական փոխհատուցման իրավունքը բխում է թե՛ ՀՀ Սահմանադրության և ՀՀ մի շարք օրենսդրական ակտերի դրույթների բովանդակությունից և թե՛ ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից արձանագրություններով) դրույթներից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայից:*»

Հենց վերը նշվածը հիմք ընդունելով էլ՝ 2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում որպես հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիք իր հատուկ ամրագրումը ստացավ հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ (հատուկ դեպքերում նաև իրավաչափ) վարքագծի արդյունքում անձանց պատճառված վնասի դիմաց հատուցում ստանալու իրավունքը սահմանող նորմը: Վնասի հատուցման իրավունքը, ամրագրվելով որպես առանձին հիմնական իրավունք, արդեն անմիջականորեն պայմանավորում է հանրային իշխանության և անձանց միջև ծագող սահմանադրաիրավական կապերի որոշակի ոլորտ:

Այս համատեքստում գիտագործնական զգալի կարևորություն է ձեռք բերում Սահմանադրության մյուս դրույթների հետ ունեցած համակարգային կապերի լույսի ներքո քննարկվող նոր հիմնական իրավունքի (այն ամրագրող նորմի) ուսումնասիրումը, որը հնարավորություն կընձեռի համակողմանիորեն բացահայտելու դրա հիման վրա ծագող սահմանադրական կապերը և երաշխավորելու այս հիմնական իրավունքի կենսաագործումը ինչպես օրենսդրության առումով, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում:

Ինչպես նշվեց, հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման իրավունքի սահմանումը բխում է Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից: Իր հերթին, Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հիմնական*

իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Սահմանադրական հիշյալ կարգավորման պարագայում մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան դառնում է այն կարևորագույն աղբյուրներից մեկը, որի հիման վրա պետք է ձևավորվեն վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակության և կիրառելիության շրջանակների վերաբերյալ պատկերացումները: Նման պայմաններում մեծ կարևորություն է ձեռք բերում մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը՝ այդ թվում վնասի հատուցման իրավունքին վերաբերող հարցերի կապակցությամբ դատարանի ձևավորած չափորոշիչների բացահայտումը:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ սահմանադիրը, կարևորելով մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական պարտականության իրացման՝ վնասի հատուցման եղանակը, Սահմանադրության մեջ նախատեսել է դրան նվիրված առանձին հոդված՝ ճանաչելով վնասի հատուցումը որպես հիմնական իրավունք: Սա վկայում է այն մասին, որ սահմանադիրը մեծ գործնական կարևորություն է տալիս պաշտպանության այս միջոցին:

Հետազոտության մեթոդական հիմքը: Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական՝ ինդուկցիայի, անալիզի, սինթեզի, համակարգային վերլուծության, բազմակողմանիության և այլ մեթոդներ, ինչպես նաև մասնավոր գիտական՝ ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական մեթոդները:

Հետազոտության մշակվածության աստիճանը, տեսական և իրավական հիմքերը: Հայրենական իրավագիտության մեջ սույն հետազոտությունը վնասի հատուցման սահմանադրական իրավունքն ուսումնասիրելու առաջին ընդգրկուն փորձերից մեկն է:

Իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման ճյուղային կարգավորումների ուսումնասիրմանը վերաբերող աղբյուներից կարել է հիշատակել, մասնավորապես, Տ.Կ. Բարսեղյանի և Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (մաս երրորդ)» դասագիրքը, Գ. Բ. Դանիելյանի ընդհանուր խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք» ուսումնական ձեռնարկը, «Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ» աշխատությունը, Գ. Հ. Բեքմեզյանի

«Արտապայմանագրային պարտավորություններ» մենագրությունը, Պ. Վ. Սարոյանի «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը:

Այս առումով պետք է ընդգծել, որ ճյուղային կարգավորումների վերաբերյալ հետազոտությունները կարևոր դերակատարություն կարող են ունենալ արդեն սահմանադրական մակարդակում վնասի հատուցման իրավունքի ուսումնասիրման հարցում՝ նպաստելով սահմանադրաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ ճիշտ եզրակացությունների կայացմանը:

Վերը նշված աղբյուրներից զատ՝ հետազոտության տեսական հիմքն են հանդիսացել Մ.Ն. Մալեինայի, Ա.Մ. Էրդելևսկու, Ա. Տ. Տաբունշչիկովի, Սոլ Լիտվինոֆֆի, Ա. Օ. Ռիբալովի, Ֆրանսուազ. Ջ. Հեմփսոնի, Ռենդի Ի. Բարնեթի, Ջոն Մըրֆիի և Քրիստիան Ուիթինգի, Յաննո Լահեի և Իրենե Կուլլի, Ֆրենսիս Ջեյքոբսի, Ռոբին Ուայթի և Քլեր Օվեյի, խմբագրությամբ Բ.Մ. Գոնգալոի, խմբագրությամբ Ա. Պ. Սերգեյևի և Յու. Կ. Տոլստոյի, ինչպես նաև այլոց աշխատությունները:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ սահմանադրությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, վնասի հատուցման հարցերին վերաբերող հայաստանյան և օտարերկրյա օրենսդրական ակտեր, մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ, այլ երկների դատարանների որոշումներ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են հանդիսանում վնասի հատուցման սահմանադրական իրավունքի կապակցությամբ անձի և հանրային իշխանության միջև ծագող իրավահարաբերությունները: Հետազոտության առարկան են կազմում այդ հարաբերությունների առանձին տարրերը, իրավաբանական բնույթը, վնասի հատուցման իրավունքի՝ որպես հիմնական իրավունքների պաշտպանության երաշխիքի, վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան, ինչպես նաև այս հարցերի վերաբերյալ արտասահմանյան երկրների փորձը՝ պայմանավորված համեմատական-իրավական վերլուծություն իրականացնելու անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը վնասի հատուցման սահմանադրական իրավունքի կապակցությամբ հանրային իշխանության և անձի միջև ծագող իրավական կապերին վերաբերող հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրումն է՝ այդ թվում մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի լույսի ներքո, որի արդյունքների կիրառումը իր նպաստը պետք է ունենա օրենսդրության կամ

իրավակիրառ պրակտիկայի մակարդակում անմիջական գործողությամբ օժտված այս հիմնական իրավունքի խախտումներից խուսափելու հարցում:

Հետազոտության հիշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա) Բացահայտել «վնաս» հասկացության սահմանադրական բովանդակությունը, ինչպես նաև ընտրել այն լավագույնս նկարագրող միասնական եզրույթներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի երաշխավորել անձանց հատուցման տրամադրումը սահմանադրությունից բխող պահանջներին համապատասխանող ցանկացած դեպքի վրա հասնելու պարագայում:

բ) Բացահայտել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակությունը, այլ կերպ՝ վեր հանել թե հանրային իշխանությունն այս հիմնական իրավունքի ուժով ինչպիսի պարտականություններ է կրում անձանց առջև:

գ) Վեր հանել

վնասի հատուցման և մյուս հիմնական իրավունքների միջև առկա կապերը:

դ) Ուսումնասիրել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի սահմանափակման հնարավորությունը և ծավալները:

ե) Ուսումնասիրել վնաս պատճառելու համար հանրային իշխանության պատասխանատվության ծագման սահմանադրական-իրավական պայմանները:

զ) Բացահայտել իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման բուն հարաբերությունների իրավաբանական բնույթը՝ քննարկելով դրանք մասնավոր թե հանրային իրավունքի կարգավորման դաշտին պատկանելու հարցը:

է) Վեր հանել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրավազոր սուբյեկտների ամբողջական շրջանակը:

ը) Հետազոտել վնասի հատուցման հիմնական իրավունքի վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան:

թ) Առաջադրված խնդիրների լույսի ներքո՝ ուսումնասիրել այլ երկրների վերաբերելի փորձը, իրականացնել իրավահամեմատական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն աշխատանքը հանդիսանում է 2015 թ. տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում որպես մարդու առանձին հիմնական իրավունք ամրագրված վնասի հատուցման իրավունքի առաջին գիտական հետազոտությունը հայրենական իրավագիտության մեջ: Ատենախոսությունը վնասի հատուցման սահմանադրական իրավունքի երաշխավորմանը վերաբերող հիմնախնդիրներին նվիրված առաջին աշխատությունն է:

Կատարված ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են նոր ներդված այս իրավունքի բովանդակությունը (այս հիմնական իրավունքի կապակցությամբ հանրային իշխանության պարտականությունների ողջ ծավալը), իրավազոր անձանց շրջանակը, առկա համակարգային կապերը հիմնական այլ իրավունքների հետ, հանրային իշխանության պատասխանատվության ծագման սահմանադրական-իրավական պայմանները, որոնց վերաբերող հարցերը մինչ այդ ուսումնասիրված չէին:

Առաջին անգամ իրականացվել է մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ վնասի հատուցման հիմնական իրավունքի հարցերին առնչվող պրակտիկայի ուսումնասիրություն, փորձ է արվել վեր հանել դատարանի ձևավորած չափորոշիչները, քանի որ ՀՀ սահմանադրության 81-րդ հոդվածի լույսի ներքո՝ հիմնական իրավունքների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների, այդ թվում վնասի հատուցման իրավունքի, մեկնաբանման հարցում մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան ձեռք է բերում կարևոր դերակատարություն:

Ատենախոսության գիտական նորույթն իր արտացոլումն է գտնում նաև **պաշտպանության ներկայացվող դրույթներում**, որոնք շարադրված են ստորև:

1. «Վնաս» սահմանադրական եզրույթի բովանդակության տակ պետք է հասկանալ անձին պատճառված ցանկացած բացասական հետևանքը՝ չկարևորելով դրսևորումները, իսկ բացասական հետևանքները պետք է տարանջատել՝ ելնելով նրանից, որ մեկ դեպքում դրանց հնարավոր է տալ ճշգրիտ դրամական արտահայտություն, մյուսում՝ ոչ:

Ներկայացվածի լույսի ներքո՝ ատենախոսությամբ հիմնավորվել է, որ՝

ա) Սահմանադրությունից բխող պահանջ է վնասները նկարագրող իրավական եզրույթների միասնականացումը: Հակառակ իրավիճակում, կախված տարբեր օրենսդրական ակտերում կիրառվող առանձին եզրույթների լեզվական հատկանիշներից (դրանց արտահայտած իմաստից), հատուցման ենթակա դեպքերը, միմյանցից կտարբերվեն, ինչպիսի պայմաններում հնարավոր չէ ապահովել այն ընդհանրական-իրավական բովանդակության հաղորդումը, որը բխում է սահմանադրական կարգավորումներից:

բ) «Վնաս» եզրույթի սահմանադրահիրավական բովանդակությունը լագայունս հաղորդելու համար՝ անհրաժեշտ է կանգ առնել միասնական «նյութական վնաս-ոչ նյութական վնաս» տարբերակի վրա՝ հրաժարվելով օրենսդրությամբ կիրառվող «գույքային», «ոչ գույքային», «բարոյական», «անձին պատճառված վնաս», «գույքին պատճառված վնաս», և այլ եզրույթների գործածումից:

2. Կարևորելով այն հանգամանքը, որ հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են իրավաբանական անձանց նկատմամբ այնքանով, որքանով այդ իրավունքներն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ՝ ատենախոսությունում հիմնավորվել է, որ իրավաբանական անձինք վնասի հատուցման սահմանադրական իրավունքից պետք է օգտվեն նաև ոչ նյութական վնասի մասով, ինչի հնարավորությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի տալիս:

Զուգահեռաբար, ատենախոսությամբ հիմնավորվել է, որ այն դեպքում, երբ իրավաբանական անձի իրավունքների խախտումները պատճառում են ոչ նյութական վնաս՝ տհաճություններ, բացասական ապրումներ (տառապանքներ) իր անդամ ֆիզիկական անձանց, ինչը ուղղակիորեն պայմանավորված է նրանց՝ խմբային շահի կրողները լինելու հանգամանքով, արդարացված մոտեցում է հանրային իշխանության կողմից պատճառված այդպիսի վնասի հատուցման պահանջի իրավունքը իրավաբանական անձին վերապահելը:

3. Ատենախոսությամբ հիմնավորել է, որ վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակությունից բխում է դրան փաստացի հասնելու համար անհրաժեշտ, բավարար ու արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի առկայությունը, ինչպիսի պայմաններում այն պետք է դիտարկել որպես առաջնային հիմնական իրավունք, որն ինքնուրույն է և որի խախտումն անպայմանորեն ածանցված չէ այլ հիմնական իրավունքների խախտում (հատուցում ստանալու նախապայմաններից մեկը) թույլ տրված լինելու հանգամանքի հաստատումից:

Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը, գտնում ենք, առաջին հերթին վերաբերում է անձի համար իրավունքի պաշտպանության միջոցի հասանելիությանը, իսկ խատված իրավունքը վերականգնելու համար՝ անձը նախ պետք է կարողանա իրավասու մարմնի առջև արդյունավետ կերպով հասնելու իր կողմից հատուցում պահանջելու իրավունքի հաստատմանը, քանզի հակառակ դեպքում պաշտպանության նման միջոցի սահմանումը կկորցնի իր գործնական նշանակությունը:

4. Ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, որի համաձայն՝

ա) Պատճառված վնասը հատուցելով՝ պետությունը կամ համայնքը (ընդհանրական կերպով՝ այսուհետ նաև հանրային-իրավական միավորում) կրում է իրավական պատասխանատվություն և չի իրականացնում իշխանական բնույթի գործունեություն: Վերջինս և տուժողն այս պարագայում հանդես չեն գալիս համապատասխանաբան որպես կառավարման սուբյեկտ և օբյեկտ:

բ) Վնասի հատուցման հարցում տուժողի շահն ու հայեցողությունն ավելի գերակա են քան այս միջոցով մարդու հիմնական իրավունքների երաշխավորման հանրային շահը:

գ) Իշխանության ակտով պատճառված վնասի հատուցումը պետք չէ ընկալել որպես վարչարարություն, այլ դիտարկել այն հանրային իշխանության և անձի հորիզոնական կապերի տիրույթում, որտեղ վերջիններս հանդես են գալիս որպես իրավահավասար կողմեր: Անհրաժեշտ է հրաժարվել իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման նյութաիրավական հարաբերությունների կարգավորումից միաժամանակ և՛ քաղաքացիական օրենսգրքով, և՛ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով՝ նախապատվությունը տալով առաջինին:

5. Ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, որի համաձայն՝

ա) Խախտված սուբյեկտիվ իրավունքի անմիջական կրողը չհանդիսացող անձինք նույնպես կարող են կրել նյութական և ոչ նյութական վնաս և հետևաբար պետք է ճանաչվեն որպես վնասի հատուցման իրավունքի սուբյեկտ: Խոսքն առաջին հերթին գնում է հանրային իշխանության գործունեության հետևանքով տուժած անձի մերձավորների մասին (այսուհետ՝ կնշվեն նաև որպես երրորդ անձինք):

բ) Հիշյալ անձանց ոչ նյութական վնասի դիմաց հատուցում տրամադրելու հարցում ուշադրություն պետք է հրավիրել նրանց համար ի հայտ եկած բացասական հետևանքների ուժգնության աստիճանին: Վերջիններիս հնարավոր է դիտարկել որպես «վնաս» կրած սուբյեկտ միայն այն դեպքում, երբ այդպիսի հետևանքներն այնքան նշանակալից են, ունեն ուժգնության այնպիսի մեծ աստիճան, որ առանց դրանց դիմաց առանձին փոխահատուցման տրամադրման հնարավոր չէ խոսել սուբյեկտիվ իրավունքի խախտման հետևանքների լիարժեք վերացման մասին:

գ) Հիշյալ անձանց վերագրելի ոչ նյութական բնույթի ազդեցության ուժգնության գնահատման հարցում շաշտադրումը պետք է կատարել տուժողի իրավունքների հիմնարար խախտումների առկայությանը՝ դրանցից բխող ծանր հետևանքներով, ինչպես նաև տուժողի և երրորդ անձի միջև առկա փաստացի (ոչ անպայմանորեն օրենքով ճանաչված ընտանեկան կապերին) անձնական առանձնահատուկ կապերին, քանզի փոխհատուցման սահմանման հիմքում դրված է այդպիսի իրական կապերի գոյության փաստով բացատրվող հոգեկան տառապանքները հարթելու նպատակը:

դ) Անհրաժեշտ է նախատեսել մերձավորի մահվան դեպքում անձին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ իմպերատիվ կարգավորում, միաժամանակ իրավակիրառին ընձեռել ճկուն կերպով գործելու հնարավորություն՝ օժտելով նրան համադրելի այլ ծանր հետևանքների դիմաց հատուցում սահմանելու լիազորությամբ, երբ դրանք այնքան զգալի են, որ արժանի են առանձին ուշադրության:

6. Ատենախոսությամբ հիմանվորվել է այն դիրքորոշումը, որ վնասի հատուցման գույքային պահանջը հանդիսանում է անձի սեփականությունը և որ կենդանության օրոք բավարարման ենթակա որևէ բնույթի վնասի (այդ թվում ոչ նյութական) հատուցման պահանջը պետք է փոխանցվի նրա ցանկացած իրավահաջորդին՝ որպես առաջինի ունեցած սեփականություն (գույք), նրա հարստության մաս:

Այս առումով, գտնում ենք, որ մահացածի կենդանության օրոք վերջինիս պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունեցողների շրջանակը սահմանափակելու դեպքում (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 162.1., մաս 2) չի երաշխավորվում Սահմանադրության 60-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձի ժառանագելու իրավունքը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ հանրային իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման պահանջի ծագման նախապայման է այդպիսի ակտի ոչ իրավաչափ ճանաչվելը՝ ատենախոսությամբ հիմնավոր է համարվել այն, որ իրավահաջորդը կարող է պահանջել իրավանախորդին պատճառված վնասի հատուցում սեփական անունից միայն, երբ առաջինի կենդանության օրոք իշխանության ակտը ճանաչվել է ոչ իրավաչափ: Բացառություն պետք է կազմեն այն իրավիճակները, երբ տուժողի մահվան պահին առկա է եղել իշխանության ակտը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ հարուցված վարույթ կամ տուժողի կենդանության օրոք այդպիսի վարույթ չի հարուցվել նրանից անկախ պատճառներով:

7. Սահմանադրական նորմերի (1-ին հոդված, 3-րդ հոդվածի 2,3-րդ մասեր, 62-րդ հոդված) համակարգային վերլուծության արդյունքերով, ատենախոսությամբ հիմնավորել է, որ՝

ա) Իշխանության ակտով վնասը պատճառած սուբյեկտը ինքնին պետությունն է կամ համայնքը (ընդհանրական կերպով՝ հանրային-իրավական միավորում), այլ ոչ այդ ակտը կայացրած անձը: Միաժամանակ իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման պայմանների շարքում պաշտոնատար անձի մեղքը տեղ չպետք է գտնի:

բ) Հանրային-իրավական միավորման պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքում, երբ վնասի պատճառումը հետևանք է վերջինիս գործունեության մեջ տեղ գտած թերացմանը:

Այնքանով, որքանով հանրային-իրավական միավորումը չի երաշխավորել անձի իրավունքները, զերծ չի մնացել իրավախախտումներից (որն իր ցանկացած բնույթի գործունեության նախապայմանն է), այդքանով էլ թերացել է և ենթակա է իրավական պատասխանատվության:

գ) Պետությունը և համայնքը կարող են խուսափել պատասխանատվությունից, երբ կհիմնավորեն, որ վնասի պատճառումը պայմանավորված չէ իրենց կողմից թույլ տրված սխալով: Նման պարագայում վերջիններիս կողմից անձանց իրավունքները երաշխավորելու պարտականության խախտման հանգամանքը չի արձանագրվի:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Կատարված հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս համալիր պատկերացում կազմել վնասի հատուցման իրավունքի մասին՝ որպես սահմանադրական իրավունք, այդ թվում որոշակիացնել այլ հիմնական իրավունքների հետ ունեցած կապերը և իրավազոր սուբյեկտների շրջանակը: Հետազոտության արդյունքները կարող են նաև օգտակար լինել այս հիմնական իրավունքին վերաբերող առանձին հիմնախնդիրների հետագա ուսումնասիրման հարցում:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս համալիր պատկերացումներ ձևավորել անմիջական գործողությամբ օժտված այս հիմնական իրավունքի ուժով հանրային իշխանության և անձի միջև ծագող կապերի վերաբերյալ, ինչն իր նպաստը կունենա գործնականում այս իրավունքի խախտումներից խուսափելու հարցում:

Հետազոտության արդյունքների ներդրումը ու փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են տարբեր գիտական հանդեսներում լույս տեսած հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, դրանցում ընդգրկված 8 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում են թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, մշակվածության աստիճանը, մեթոդական, տեսական և իրավական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը ու դրա արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության **«Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը. Ընդհանուր դրույթներ»** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է 4 պարագրաֆներից:

«Վնաս» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը. եզրութաբանական մի քանի հարցեր» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվել է «վնաս» սահմանադրական եզրույթի իրավական բովանդակությունը, ինչպես նաև կատարվել են առաջարկներ վերջինիս տակ ընկած իմաստը լավագույնս հաղորդող եզրույթների ընտրության և առհասարակ վնասները նկարագրող եզրույթների միասնականացման վերաբերյալ:

«Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակությունը» վերտառությամբ պարագրաֆում քննարկման առարկա է դարձնել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակությունը (այդ իրավունքի կապակցությամբ հանրային իշխանության պարտականությունների շրջանակը), ինչպես նաև ներկայացվել են առաջինի և մյուս հիմնական իրավունքների միջև առկա կապերը:

«Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը որպես իրավական պաշտպանության միջոց ունենալու իրավունքի դրսևորում և դրա սահմանափակման հնարավորությունը» վերտառությամբ պարագրաֆում վնասի հատուցման սահմանադրական իրավունքը առավել խորությամբ քննարկվել է հանրային իշխանությունից խախտված իրավունքի պաշտպանության միջոց ստանալու իրավունքի դիտանկյունից և ուսումնասիրվել են քննարկվող հիմնական իրավունքի սահմանափակման հնարավորությունն ու ծավալը:

«Իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության առանձնահատկությունները» վերտառությամբ պարագրաֆում քննարկվել են իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման բուն իրավահարաբերությունների բնույթին վերաբերող հիմնախնդիրները:

Ուսումնասիրվել են այս սահմանադրական կապերի շրջանակում համապատասխանաբար հանրային իշխանության և տուժողի ստանձնած

դերակատարությանը, ինպես նաև դրանցով առաջնահերթ պաշտպանվող շահերին վերաբերող հարցերը:

Ատենախոսության **«Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի առանձին հիմնահարցեր»** վերտառությամբ երկրորդ գլուխը բաղկացած է 4 պարագրաֆներից:

«Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրավազորը. Իրավախախտմամբ տուժած երրորդ անձանց հիմնահարցերը» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվում են նախ հիշյալ հիմնական իրավունքի իրավազոր սուբյեկտներին որոշելու ընդհանուր պայմանները, ապա քննարկվում են երրորդ անձանց, ում իրավունքները իրավախախտմամբ չեն շոշափվում, վնասի հատուցման սահմանադրական իրավունքի կրողը հանդիսանալու հնարավորության և պայմանների հիմնահարցերը:

«Տուժողի մահվան ազդեցությունը վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության վրա» վերտառությամբ պարագրաֆում քննարկվում են տուժողի մահվան դեպքում վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության շարունակականության հարցերը և այն սահմանադրաիրավական երաշխիքները, որոնց վրա տուժողի իրավահաջորդները կարող են հենվել՝ սեփական անունից հանդես գալով հանրային իշխանության կողմից իրենց իրավանախորդին պատճառված վնասի հատուցման պահանջով:

«Իրավաբանական անձը որպես վնասի հատուցման սահմանադրական իրավունքի կրող» վերտառությամբ պարագրաֆում քննարկվում են իրավաբանական անձի կողմից հատկապես ոչ նյութական վնասի մասով հիմնական իրավունքի իրավազորը հանդիսանալու հարցերը՝ հաշվի առնելով, որ իրավունքի այս սուբյեկտի վրա հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրա նկատմամբ:

«Պաշտոնատար անձի մեղքի դերը վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության հարցում» վերտառությամբ պարագրաֆում քննարկման առարկա է դարձել պատճառված վնասի հատուցման հարցում իշխանության ակտը անմիջապես կայացրած պաշտոնատար անձի մեղքի ունեցած դերը, ինչպես նաև առհասարակ հանրային իշխանության պատասխանատվության ծագման սահմանադրական-իրավական պայմանները:

Եզրակացությունում ատենախոսության հիմնական դրույթների լույսի ներքո շարադրվում են հետազոտության արդյունքների հիման վրա մշակված եզրակացությունները, որոնք հանգում են հետևյալին.

Ա) Սահմանադրական մակարդակում «վնաս» եզրույթի տակ պետք է հասկանալ ցանկացած բացասական հետևանք, որը անձը կրել է հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության արդյունքում:

Որևէ բնույթի օբյեկտի (էական չէ գույքային, թե ոչ գույքային) վնասման արդյունքում ի հայտ եկող բացասական հետևանքներին մեկ դեպքում հնարավոր է տալ ճշգրիտ դրամական արտահայտություն, մյուս դեպքում՝ ոչ: Հենց այս չափանիշը պետք է դնել վնասների տարանջատման գաղափարի հիմքում:

Հաշվի առնելով, որ Սահմանադրությունը պահանջում է հատուցել պատճառված բոլոր բացասական հետևանքները՝ դրանք նկարագրելու համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի եզրույթներ, որոնք կերաշխավորեն օրենսդրական կարգավորումներին անհրաժեշտ իմաստի հաղորդումը: Այս խնդիրը լավագույնս լուծելու համար օրենսդրության մեջ պետք է կիրառել միասնական «նյութական-ոչ նյութական վնաս» եզրույթը՝ հրաժարվելով առանձին իրավական ակտերում տարբեր եզրույթների գործածումից:

Բ) Վնասի հատուցումը հանդիսանում է խախտված իրավունքների պաշտպանության միջոցներից մեկը:

Այս հիմնական իրավունքի բովանդակությունից հետևում է, որ պետք է գոյություն ունենա իրավասու ներպետական մարմին, որին անձը կարող է դիմել վնասի հատուցման պահանջով, ինչպես նաև օգտվել արդյունավետ իրավական գործիքակազմից, որը փաստացի հնարավորություն կտա հասնելու իրեն պատճառված վնասի հատուցմանը: Եթե այս պայմանները ապահովված չեն, ապա պետք է արձանագրել, որ թույլ է տրվել վնասի հատուցման սահմանադրական իրավունքի խախտում:

Միաժամանակ վնասի հատուցման սահմանադրական իրավունքը, անշուշտ, ենթադրում է հանրային իշխանությանը՝ որպես իրավախախտի, պատճառված բացասական հետևանքների հնարավոր լրիվ չեզոքացման վերաբերյալ նյութաիրավական պահանջ ներկայացնելու հնարավորությունը:

Գ) Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակությունը հնարավորություն է տալիս բացահայտել այլ հիմնական իրավունքների հետ ունեցած կապերը:

Այսպես, որպես իրավունքի պաշտպանության միջոց ստանալու հնարավորություն՝ վնասի հատուցման սահմանադրական իրավունքը սերտ կապի մեջ է գտնվում ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի, 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի հետ: Նույնը կարելի է ասել ՀՀ սահմանադրության

50-րդ հոդվածով նախատեսված պատշաճ վարչարարության իրավունքի մասին՝ այնքանով, որքանով վարչական մարմինը հանդիսանում է այն ներպետական ատյանը, որին անձը ներկայացնում է իրեն պատճառված վնասի հատուցման պահանջը:

Նշվածին զուգահեռ, վնասի հատուցման գույքային պահանջը իրավատիրոջը պատկանող նյութական արժեք է (ակտիվ) և հետևաբար համարվում է նրա գույքը՝սեփականությունը: Սեփականության սահմանադրական իրավունքից բխող հանրային իշխանության պարտականությունները կիրառելի են նաև վնասի հատուցման պահանջի նկատմամբ: Մասնավորապես, երբ հանրային իշխանությունը տուժած անձի պահանջով չի տրամադրում պատճառված վնասի դիմաց հատուցումը (պահանջը չի իրացվում), ապա խախտում է նաև սեփական հայեցողությամբ իր գույքը օգտագործելու, տնօրինելու անձի իրավունքը:

Դ) Խախտումը հաստատված լինելու դեպքում հատուցում ստանալու իրավունքը սահմանափակվել չի կարող, քանի որ դա կխաթարի վնասի հատուցման իրավունքի էությունը: Անձի համար վնասի հատուցման տեսքով պետությունից պաշտպանության միջոց ստանալու մատչելիությունն արդեն իրավաչափորեն կարող է ենթարկվել որոշակի սահմանափակման:

ՄԻԵԴ պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ երբ պահանջի ընդունման փուլում արդեն իսկ ակնհայտ է, որ այն ենթակա չէ բավարարման, ապա կարելի է առհասարակ պահանջը քննության չառնել: Այդ պարագայում վնասի հատուցման պահանջով ներպետական մակարդակում հանդես գալու մատչելիությունն անձի համար սահմանափակելը համարվում է իրավաչափ:

Ե) Հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցումը բոլոր դեպքերում կախված է տուժողի հայեցողությունից: Հաշվի առնելով նշվածը և այն, որ իրեն պատճառված վնասի հատուցման հարցում գլխավոր շահառուն հենց տուժողն է՝ գտնում ենք, որ հանրային իշխանության պատճառած վնասի հատուցման հարաբերությունները առաջին հերթին ծագում են մասնավոր շահի սպասարկման կապակցությամբ:

Զուգահեռաբար, գտնում ենք, որ վնասի հատուցման նյութաիրավական հարաբերություններում հանրային իշխանությունը հանդես է գալիս իրավախախտի դերում, ով վերականգնում է խախտված իրավունքը (հատուցում պատճառված վնասը) և այս պարագայում անձի հետ չի հարաբերվում իշխանության դիրքերից՝ թելադրելով իր կամքը:

Նման պայմաններում վնասի հատուցման գույքային հարաբերությունների իրավակարգավորումը նպատակահարմար է բերել քաղաքացիական օրենսդրության դաշտ:

Զ) Հանրային իշխանության ոչ իրավաչափ գործունեության հետևանքով հնարավոր է ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութկան բնույթի վնաս կրեն նրանք (ասենք մերձավոր հարազատները, անձի խնամքի ներքո գտնվողները), ում սուբյեկտիվ իրավունքներն ինքնին նման գործունեությամբ չեն խախտվել:

Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրավազոր կարող է լինել յուրաքնաչյուր ոք, ով հանրային իշխանության ոչ իրավաչափ (օրենքով նախատեսված հատուկ դեպքերում նաև իրավաչափ վարչարարության) գործունեության հետևանքով կրել է վնաս: Այս հարցում էական է ոչ այնքան անձի որևէ իրավունքի խախտման, որքան փաստացի վնաս կրելու հանգամանքի հաստատումը:

Հաշվի առնելով, որ նյութական վնասը միշտ ենթակա է ճշգրիտ դրամական չափման՝ այդպիսի բացասական հետևանքներ կրած երրորդ անձանց համարժեք հատուցման տրամադրման անհրաժեշտությունն անկասկած է:

Խնդիրը ավելի բարդանում է այն դեպքում, երբ խոսք է գնում առաջնային տուժողի իրավունքների խախտման հետևանքով երրորդ անձանց ոչ նյութական բնույթի վնաս պատճառելու հնարավորության մասին: Այս պարագայում հատուցման տրամադրման հարց կարող է բարձրանալ միայն այն ժամանակ, երբ երրորդ անձանց կրած ոչ նյութական բնույթի բացասական ազդեցությունը այնքան ուժգին է, որ առանց դրա դիմաց առանձին փոխհատուցում տրամադրելու՝ հնարավոր չէ խոսել իրավախախտման հետևանքների վերացման կամ հարթման մասին: Մնացյալ դեպքերում պետք է համարել, որ առաջնային տուժողին լրիվ հատուցման տրամադրումը բավարարել է հարթելու համար նաև այլոց պատճառված հնարավոր բացասկաան հետևանքները:

ՄԻԵԴ պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավախախտման՝ երրորդ անձանց վրա ունեցած ոչ նյութական բնույթի բացասական ազդեցության ուժգնության գնահատման հարցում էական դեր ունի առաջնային տուժողի իրավունքների հիմնարար խախտում թույլ տրված լինելու հանգամանքը, ինչպես նաև առաջնային տուժողի հետ սերտ անձնական կապերի առկայութունը:

Մասնավորապես, ՄԻԵԴ-ը իր բազմաթիվ վճիռներում արձանագրել է անձին կյանքից ապօրինաբար զրկելու հետևանքով նրա մերձավոր հարազատներին (ծնողներ, զավակներ, ամուսին և այլն) պատճառված հոգեկան տառապանքների

դիմաց վերջիններիս փոխհատուցում վճարելու անհրաժեշտության մասին՝ դրա բացասակայությունը դիտարկելով որպես Կոնվենցիայի խախտում:

Առաջնային տուժողի մերձավորներին փոխհատուցման տրամադրումը նպատակ է հետապնդում հարթել (վերացնել) իրավախախտման առանձին ուշադրության արժանի բոլոր հետևանքները: Սա նշանակում է, որ համադրելի այլ ծանր հետևանքների դիմաց առաջնային տուժողի մերձավորներին հատուցման տրամադրման հնարավորությունը նույնպես բացառել չի կարելի՝ յուրաքանչյուր գործով դրա արդարացված լինելը թողնելով իրավակիրառի գնահատմանը:

Է) ՀՀ սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները իրավաբանական անձանց վրա տարածվում են այնքանով, որքանով այդ իրավունքներն իրենց էությամբ կիրառելի են նրանց նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բացառում է իրավաբանական անձի կողմից ոչ նյութական վնասի դիմաց հատուցում պահանջելու հնարավորությունը:

Իրականում, իրավաբանական անձինք նույնպես կարող են կրել դրամական արտահայտություն չունեցող բացասական հետևանքներ՝ արդեն այնպիսիք, որոնք բխում են իրավունքի այս սուբյեկտի բնույթից: Դրանց շարքին կարելի է դասել, ասենք, անորոշությունը որոշումներ կայացնելու հարցում, կազմակերպության աշխատանքի խաթարումը, անախորժությունները, որոնց կազմակերպությունը բախվում է իր գործարար համբավի արատավորման հետևանքով, գործունեությունն իրականացնելիս պատճառված անհարմարությունները և այլն, որոնք ֆիզիկական անձանց վերագրելի ոչ դրամական բացասական հետևանքներին հավասար կերպով արժանի են ուշադրության և համարժեք հատուցման:

Այս պայմաններում պետք է հրաժարվել ոչ նյութական վնասը որպես «տառապանքներ» դիտարկելու մոտեցումից և այն սահմանել որպես անձին պատճառված դրամական արտահայտությունից զուրկ ցանկացած բացասական հետևանք՝ չսահմանափակելով իրավաբանական անձի կողմից ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորությունը:

Միաժամանակ, Երբ իրավաբանական անձի իրավունքների խախտման պայմաններում խմբային շահի սպասարկման անհնարինության կամ անարդյունավետության պատճառով դրա անդամները (խումբը) կրում են տառապանքներ, այսինքն՝ ոչ նյութական վնասի պատճառումը պայմանավորված է հենց խմբային շահի կրողը լինելու հանգամանքով, արդարացի մոտեցում է հատուցում ստանալու իրավունքը վերապահել վնասված շահի երաշխավորը հանդիսացող իրավաբանական անձին:

Ը) Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի սահմանման նպատակը խախտված իրավունքների և ազատությունների, վնասված օրինական շահերի հնարավորինս վերականգնում է:

Այն դեպքում, երբ մինչև հատուցում ստանալը տուժողը մահանում է, վնասի հատուցման սահմանադրական իրավունքի նման գործառույթը սպառվում է, որպիսի պայմաններում այլևս հնարավոր չէ խոսել այս հիմնական իրավունքի իրավահաջորդության մասին:

Զուգահեռաբար, ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը հանդիսանում է գույք (սեփականություն) և համապարփակ իրավահաջորդության կարգով ենթակա է փոխանցման տուժողի ժառանգներին: Այս պարագայում, տուժողի իրավահաջորդները, ովքեր ժառանգել են նրան պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը, սահմանադրական մակարդակում նման պահանջի հիմքում կարող են արդեն դնել իրենց սեփականության հիմնական իրավունքը:

Թ) Իշխանության ակտով վնասը պատճառած սուբյեկտը ոչ թե պաշտոնատար անձն է, այլ հենց հանրային-իրավական միավորումը, քանի որ առաջինը գործում է երկրորդի անունից՝ իրացնելով երկրորդին պատկանող իշխանությունը:

Իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման հարցում պաշտոնատար անձի մեղքը չպետք է դիտարկել որպես հանրային-իրավական միավորման պատասխանատվության ծագման պայման:

Հայաստանի Հանրապետությունը իրավական պետություն է, Սահմանադրության ուժով պարտավոր է երաշխավորել (հարգել և պաշտպանել) անձի իրավունքներն ու ազատությունները: Եթե հանրային-իրավական միավորումն իր գործունեությունն իրականացնելիս չի կարողանում զերծ մնալ իրավախախտումներից, ապա ստացվում է, որ ձախողում է իր պարտականությունների կատարումը, թերանում է անձանց իրավունքները երաշխավորելու հարցում, ինչում էլ հենց արտահայտվում է նրա մեղքը:

Այնքանով, որքանով հանրային-իրավական միավորումը չի երաշխավորել անձի իրավունքները, զերծ չի մնացել իրավախախտումներից (որն իր ցանկացած բնույթի գործունեության առաջնային պայմանն է), այդքանով էլ ենթակա է իրավական պատասխանատվության: Սա նաև նշանակում է, որ հանրային-իրավական միավորումը կարող է խուսափել պատասխանատվությունից, եթե հիմնավորվի, որ վնասի պատճառումը իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքը չէ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գրիգորյան Ա., «Վնասի հատուցման հիմնական իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության հիմնահարցերը», Արդարադատություն գիտական հանդես, Երևան, 2019 թ., թիվ 2 (48), էջեր 25-32:

2. Գրիգորյան Ա., «Վնասի հատուցման հիմնական իրավունքի սահմանափակման հիմնահարցերը», «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2019 թ., գիրք 10 (02), էջեր 194-210:

3. Գրիգորյան Ա., «Հանրային Իշխանական ակտով պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության բնույթի առանձնահատկությունները», «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան, 2020 թ., թիվ 1/2020, էջեր 161-174:

4. Գրիգորյան Ա., «Վնաս եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը. եզրութաբանական որոշ հարցեր». «Դատական իշխանություն» գիտամեթոդական հանդես, Երևան, 2020 թ., թիվ 9-10 (255-256), էջեր 11-25:

5. Գրիգորյան Ա., «Իրավաբանական անձը որպես վնասի հատուցման սահմանադրական իրավունքի կրող. ոչ նյութական վնասին վերաբերող հիմնահարցեր», «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2020 թ., գիրք 11 (02), էջեր 235-251:

6. Գրիգորյան Ա., «Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրավազորը. տուժած երրորդ անձանց հիմնահարցեր». «Դատական իշխանություն» գիտամեթոդական հանդես, Երևան, 2020 թ., թիվ 1-2 (259-260), էջեր 28-42:

7. Գրիգորյան Ա., «Տուժողի մահվան ազդեցությունը վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության վրա», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, 2021 թ., թիվ 1 (53), էջեր 38-46:

8. Գրիգորյան Ա., «Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը և պաշտոնատար անձի մեղքը», «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան 2021, թիվ 1/2021, էջեր 174-183:

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ГРИГОРЯН АРМАН МАНВЕЛОВИЧ

КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО НА ВОЗМЕЩЕНИЕ ВРЕДА: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ И ЕВРОПЕЙСКИЕ ПРАВОВЫЕ СТАНДАРТЫ

РЕЗЮМЕ

Согласно Конституции Республика Армения является правовым, демократическим государством, в котором человек является высшей ценностью, а обязанность публичной власти-уважать и защищать основные права и свободы человека, которыми она ограничена непосредственно.

Таким образом, публичная власть в своей деятельности ограничена основными правами и свободами человека, в то время как одной из важнейших ее цельей является их защита и создание необходимых условий для фактической реализации основных прав.

Несмотря на вышесказанное, нередки случаи публичная власть сама нарушает оснавные права и свободы человека. В этом случае возникает необходимость восстановления нарушенных прав и свобод, что сново следует рассматривать как часть конституционной обязанности публичной власти по защите прав и свобод человека.

Если факт нарушения права зафиксирован, его защита в основном осуществляется путем восстановления положения, существовавшей до нарушения, либо путем предоставления лицу соразмерного возмещения за последствия нарушения. Восстановление нарушенного права путем возмещения причиненного вреда является проявлением исполнения конституционного обязательства публичной власти по защите прав и сбвобод человека.

Несмотря на то, что право на возмещение вреда, как отдельное основное право, получило закрепление в Конституции Республики Армения только в 2015 году, в результате внесенных изменений, оно уже находило свое отражение в ранее ратифицированных Республикой Армения международных договорах в области прав человека.

Так, согласно статье статье 13 Европейской конвенции о защите прав человека, *каждый, чьи права и свободы, признанные в настоящей Конвенции, нарушены, имеет право на эффективное средство правовой защиты в*

государственном органе, даже если это нарушение было совершено лицами, действовавшими в официальном качестве.

Согласно пункту а части 3 статьи 2 Международного пакта о гражданских и политических правах, *каждое участвующее в настоящем Пакте Государство обязуется обеспечить любому лицу, права и свободы которого, признаваемые в настоящем Пакте, нарушены, эффективное средство правовой защиты, даже если это нарушение было совершено лицами, действовавшими в официальном качестве.*

Исходя из вышеизложенного, в 2015 году, в результате внесения поправок в Конституцию РА, в качестве гарантии защиты прав и свобод человека была зафиксирована норма, предусматривающая право на возмещение вреда, причиненного в результате противоправной деятельности (в установленных законом случаях-также правомерным администрированием) публичной власти.

Учредитель Конституции придав большое значение указанному способу защиты прав и свобод человека, посвятил ему отдельную статью в Конституции, признав право на возмещение вреда как одним из основных прав человека.

В этом контексте всестороннее изучение рассматриваемого права приобретает важное научное и практическое значение, обусловленное необходимостью определения круга носителей данного права, раскрытия его содержания (включая связи с другими основными правами), обеспечения соответствия законодательства и правоприментиельной практики с требованиями, вытекающими из этого конституционного права.

В свою очередь, согласно части 1 статьи 81 Конституции Республики Армения, *при толковании положений об основных правах и свободах, закрепленных в Конституции, учитывается практика органов, действующих на основании международных договоров о правах человека, ратифицированных Республикой Армения.*

В силу этого положения, прецедентное право Европейского суда по правам человека становится одним из важнейших источников, на основании которого должны быть разработаны идеи о содержании и применении конституционного права на возмещение вреда, тем самым обусловливая значимость ее изучения.

Резюмируя выше сказанное, отметим, что диссертация посвящена изучению закрепленного Конституцией Республики Армения права на возмещение вреда в свете имеющихся системных связей с другими конституционными правами, практики Европейского суда по правам человека и результатов сравнительно-правового анализа.

RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY

GRIGORYAN ARMAN MANVEL

THE CONSTITUTIONAL RIGHT TO COMPENSATION FOR DAMAGE: COMPARATIVE ANALYSIS AND EUROPEAN LEGAL STANDARDS.

SUMMARY

The Constitution proclaims that the Republic of Armenia is a democratic state governed by the rule of law, in which the human being is the highest value and the duty of the public authority is to respect and protect basic human rights and freedoms by which it is directly restricted.

Thus, in its activity the public authority is limited by basic human rights and freedoms, while one of its most important aims is their protection and creation of necessary conditions for the actual implementation of basic rights.

Despite the foregoing, it is not uncommon for public authority to violate the above-mentioned rights and freedoms. In this case, there rises the need of provision of an appropriate remedy, which again must be seen as a part of the constitutional duty of public authority to protect human rights and freedoms.

If the human rights violation is found to have happened, its restoration (protection) is mainly implemented whether by restoring the situation that existed prior to the violation or by providing the victim with adequate redress for the consequences of the violation. The provision of redress for damage caused is one of the manifestations of the implementation of public authority's constitutional obligation to protect human rights and freedoms.

Despite the fact that the right to compensation for damage as a separate basic right was enshrined in the Constitution of the Republic of Armenia only in 2015, following the constitutional amendments, it has already been reflected in international treaties previously ratified by the Republic of Armenia in the field of human rights.

So, according to the article 13 of the Convention for the Potection of Human Rights and Fundamental Freedoms (European Convention on Human Rights), *Everyone whose rights and freedoms as set forth in this Convention are violated shall have* ***an effective remedy*** *before a national authority notwithstanding that the violation has been committed by persons acting in an official capacity.*

According to the article 2, paragraph 3 (a) of the International Convenant on Civil and Political Rights, *each State Party to the present Covenant undertakes to*

ensure that any person whose rights or freedoms as herein recognized are violated shall have an effective remedy, notwithstanding that the violation has been committed by persons acting in an official capacity.

On the basis of the above-mentioned, in 2015, following the amendments to the Constitution of the Republic of Armenia, the right to compensation for damage inflicted through an unlawful conduct (in cases prescribed by law, there is a right to compensation for damage caused through legitimate administration) of the public authority was fixed as a guarantee for the protection of human rights and freedoms.

The drafters of the constitutional amendments attached a big importance to this kind of remedy and devoted to it a separate article in the Constitution of the Republic of Armenia, recognising the right to compensation for damage as a basic human right.

In this context, the comprehensive study of the right under consideration assumes a significant scientific and practical importance, due to the need to determine the scope of its holders, to disclose its content (including the links with other basic rights), to bring the legislation and legal practice into line with the requirements arising from this constitutional right.

As it was mentioned, the provision of the right to compensation for damage caused by the public authority stems from the international obligations assumed by the Republic of Armenia. In its turn, according to article 81, paragraph 1 of the constitution of the Republic of Armenia *The practice of bodies operating on the basis of international treaties on human rights, ratified by the Republic of Armenia, shall be taken into account when interpreting the provisions concerning basic rights and freedoms enshrined in the Constitution.*

In the context of provisions of article 81, paragraph 1 of the Constitution of the Republic of Armenia, the case law of European Court of Human Rights becomes one of the most important sources based on which should be developped the ideas about the content and application of the basic right to compensation for damage and thereby commensurates the importance of its study.

Summarizing the above-mentioned, it should be noted that the thesis is dedicated to the study of the right to compensation for damage enshrined in the Constitution of the Republic of Armenia in the light of systematic links with other basic rights, the practice of European Court of Human Rights and the results of a comparative analysis.